

ՀՀ կենտրոնական բանկի եզրակացությունը

«ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

2010 թվականին Հայաստանի մակրոտնտեսական միջավայրի հիմնական զարգացումները պայմանավորված էին համաշխարհային տնտեսության վերականգնմամբ և հակաճգնաժամային միջոցառումների շրջանակներում իրականացված դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների նախորդ տարվանից փոխանցված ընդլայնողական ազդեցությունների դրսևորմամբ: Այս գործոններով պայմանավորված՝ Հայաստանի մակրոտնտեսական միջավայրը բնութագրվեց տնտեսական ակտիվության վերականգնմամբ և գնաճային միջավայրի ձևավորմամբ: Արդյունքում, 2010 թվականին Հայաստանում արձանագրվեց տնտեսական աճի 2.1 տոկոս մակարդակ նախորդ տարվա 14.2 տոկոս անկման դիմաց:

Մակրոտնտեսական ձևավորված միջավայրում, ՀՀ հարկաբյուջետային քաղաքականության ընթացքը 2010 թվականին բնորոշվեց նախորդ տարվա ընթացքում իրականացրած հակաճգնաժամային ընդլայնողական ակտիվ քաղաքականությունից դեպի հավասարակշռված քաղաքականության վերադառնալու գործողություններով: Վերջինս ուղեկցվել է գնաճի մեղմանն ուղղված դրամավարկային քաղաքականությամբ, այն է տարվա առաջին կեսին իրականացնելով դրամավարկային պայմանների խստացում (վերաֆինանսավորման տոկոսադրույքի 2.25 տոկոսային կետով բարձրացում), իսկ տարվա երկրորդ կեսին գնաճի ձևավորման վրա առաջարկի գործոնների գերակայության պայմաններում՝ առավելապես ձեռնպահ մնալով դրամավարկային պայմանների խստացումից:

ՀՀ տնտեսության ակտիվության վերականգնումը դրական անդրադարձավ պետական բյուջեի եկամուտների վրա՝ նպաստելով բյուջեի հարկային եկամուտների տարվա համար ծրագրված մակարդակի գերազանցմանը և սոցիալական ապահովության վճարների ծրագրված մակարդակի ապահովմանը: Այսպես, տարվա արդյունքում հարկային եկամուտները 2.3%-ով

գերազանցել են տարվա համար ծրագրված մակարդակը և նախորդ տարվա նկատմամբ ապահովել 13.7% աճ: Միևնույն ժամանակ, տարվա արդյունքում ՀՆԱ-ում հարկային եկամուտների (առանց սոցապ վճարների) տեսակարար կշիռը նախորդ տարվա նկատմամբ աճել է 0.4 տոկոսային կետով կազմելով 17.2 տոկոս, ինչը 0.5 տոկոսային կետով ցածր է տարվա համար նախատեսված հարկեր/ՀՆԱ ցուցանիշից: Հատկանշական է, որ հարկային եկամուտների կազմում աճել է անուղղակի հարկերի տեսակարար կշիռը՝ 2.2 տոկոսային կետով, որից 2 տոկոսային կետը բաժին է ընկել ավելացված արժեքի հարկին:

ՀՀ կառավարության կողմից հավասարակշիռ հարկաբյուջետային քաղաքականության վերադառնալու 2010 թվականին որդեգրած քաղաքականության արդյունքները դրսևորվեցին նաև պետական բյուջեի ծախսերի կատարման ոլորտում: Այսպես, 2010 թվականին նախորդ տարվա համեմատ ՀՆԱ-ի անվանական մեծության 11.6% աճի պայմաններում ՀՀ պետական բյուջեի ծախսերն ավելացել են 2.7%-ով, ինչը հանգեցրել է ՀՆԱ-ի նկատմամբ ծախսերի հարաբերակցության նվազմանը՝ կազմել է 27.6%՝ պետական բյուջեի մասին օրենքում կանխատեսված 29.1%-ի և 2009 թվականի 29.9%-ի դիմաց: Տարվա արդյունքում պետական բյուջեի ծախսերը կազմել են տարվա համար նախատեսվածի 97.7%-ը, ընդ որում շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի ցածր կատարողականով, առանց որոնց ծախսերի կատարողականը կազմել է 99%: Ընդ որում, ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի ընթացիկ ծախսերը կազմել են տարեկան ծրագրի 98.8%-ը, միևնույն ժամանակ նախորդ տարվա նկատմամբ ապահովելով 2.7% աճ: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների գծով ծախսերը կազմել են տարեկան ծրագրվածի 93.9%-ը, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 9.3%-ով:

Հատկանշական է, որ եռամսյակների ընթացքում պետական ծախսերի ֆինանսավորումն իրականացվել է նախորդ տարիներին նկատված նույն սեզոնային բաշխվածությամբ, որը հատկապես ուշագրավ է տարվա չորրորդ եռամսյակում: Այսպես, 2010 թվականի չորրորդ եռամսյակում իրականացրած պետական ծախսերը կազմել են տարվա ընթացքում իրականացրած ծախսերի 30%-ը, իսկ դեկտեմբերին բաժին է ընկել չորրորդ եռամսյակի ծախսերի 42%-ը, ինչը 1.6 անգամ գերազանցել է նախորդ տասնմեկ ամիսների ծախսերի միջին մակարդակը:

Բյուջեի եկամուտների և ծախսերի վերը նշված համամասնությունների պայմաններում բյուջեի պակասուրդը կազմել է ծրագրով նախատեսվածի 85.5%-ը, որը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 65.2 մլրդ դրամով: Միննույն ժամանակ նվազել է պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը կազմելով 5%՝ բյուջեում կանխատեսված 6%-ի և 2009 թվականի 7.7%-ի դիմաց: Ընդ որում, բյուջեի պակասուրդի 61.8%-ը ֆինանսավորվել է պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրների, իսկ 38.2%-ը արտաքին աղբյուրների հաշվին: Ինչ վերաբերում է պետական արժեթղթերի տեղաբաշխումից ստացվող եկամտի հաշվին բյուջեի պակասուրդի ֆինանսավորմանը, ապա այն ապահովել է տարվա համար նախատեսված 30.0 մլրդ դրամը: Վերջինիս ապահովմանը նպաստել է նաև հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման ոլորտում գործողությունների արդյունավետ իրականացումը:

Այսպիսով, 2010 թվականին ՀՀ կառավարության կողմից որդեգրած հավասարակշիռ հարկաբյուջետային քաղաքականության իրականացումը, որը բխում է ՀՀ կառավարության միջին ժամկետ ռազմավարության ծրագրից և նախատեսում է հետագա տարիներին պետական բյուջեի պակասուրդի կրճատում, իրական նախադրյալներ կստեղծի մակրոտնտեսական կայունության պահպանման համար և կնպաստի միջին ժամկետում գնաճի նպատակային թիրախի ապահովմանը: